ԱՔՍՈՐԱԿԱՆԻ ԵՐԳԸ

(Իրլանդական մեղեդի)

—

«Թռչնիկ, թռչնիկ, որ չուել ես հեռաւոր
Հայրենիքից,—ինչ ես ուզում ինձ ասել։»
—Այնտեղ քո մօր, քո դրժբախտ մօրն ամեն օր
Վիճակուած է արտասուել։

«Թռչնիկ, թռչնիկ, որ ապրել ես՝ բուն դրրած
Մեր կրտրան տակ,—ինչ ողջոյն ես ինձ բերել։»
—Այնտեղ քո տունն անտէր, անլոյս, աւերած,
Այնտեղ ամէնքն են մեռել...

«Հողմիկ, հողմիկ իմ հայրենի աշխարհի,
Ի՞նչ լուր ունես, քեզ եմ մընում անհամբեր։»
—Այնտեղ կրռւում ընդդէմ թոյնի ու չարի
Զոհւում են քո եղբայրներ...

«Հողիկ, հողմիկ, մի՞թէ այնտեղ ոսկեվառ
Արշալոյսը չէ հալածել դեռ խաւարը»
—Ո՛չ, ես այնտեղ առաջուայ պէս տեսայ ժանտ
Մի՛այն դահիճ ու մութ բանտ...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ